



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Աֆտոզ ստամատիտով, ֆարինգիտով և լիմֆադենիտով ուղեկցվող պարբերական տենդ (PFAPA)

Տարբերակ 2016

1. Ի՞նչ է PFAPA-ն:

1.1 Ի՞նչ է սա:

PFAPA հապավումը բացվում է որպես Պարբերական տենդ, Ադենիտ, Ֆարինգիտ, Աֆտոզ ստամատիտ: Այս բժշկական տերմինը բնութագրվում է տենդի կրկնվող գրոհներով, պարանոցային ավշահանգույցների մեծացմամբ, կոկորդի ցավի և բերանի խոռոչում խոցերի առկայությամբ: PFAPA-ն առաջանում է վաղ մանկական տարիքում, սովորաբար սկիզբը դիտվում է մինչև 5 տարեկանը: Հիվանդությունը խրոնիկ ընթացք ունի, բայց այն բարորակ է և ժամանակի ընթացքում լավացման միտում ունի: Հիվանդությունն առաջին անգամ նկարագրվել է 1987թ.-ին և այն ժամանակ կոչվել է Մարշալի համախտանիշ:

1.2 Ի՞նչ հաճախականությամբ է այն հանդիպում:

PFAPA-ի հանդիպման հաճախականությունը հայտնի չէ, սակայն հիվանդությունը հանդիպում է ավելի հաճախ, քան ընդհանուր առմամբ ախտորոշվում է:

1.3 Որո՞նք են հիվանդության պատճառները:

Հիվանդության պատճառները անհայտ են: Տենդի ընթացքում իմուն համակարգը ակտիվանում է: Այս ակտիվությունը առաջացնում է տենդով ուղեկցվող բորբոքային պատասխան և բերանի խոռոչի

կամ կոկորդի բորբոքում: Բորբոքումը լավանում է ինքնուրույն, քանի որ երկու դրվագների միջև ընկած ժամանակաշրջանում բորբոքման նշաններ չեն հայտնաբերվում: Գրոհների ընթացքում ինֆեկցիոն ագենտ չի հայտնաբերվում:

1.4 Այն ժառանգակա՞ն է:

Նկարագրված են ընտանեկան դեպքեր, սակայն ներկայումս գենետիկ պատճառ չի հայտնաբերվել:

1.5 Այն ինֆեկցիա՞ն է:

Այն ինֆեկցիոն հիվանդությունն չէ և վարակիչ չէ: Սակայն, հիվանդների մոտ ինֆեկցիան կարող է տենդի նույնպես հրահրել:

1.6 Որո՞նք են հիմնական նշանները:

Հիմնական նշանը կրկնվող տենդն է, որն ուղեկցվում է կոկորդի ցավով, բերանի խոռոչում խոցերով կամ պարանոցային ավշահանգույցների (որն իմուն համակարգի կարևոր մասն է) մեծացումով: Տենդի դրվագները սկսվում են հանկարծակի և տևում են 3-6 օր: Տենդի դրվագների ընթացքում երեխաները շատ հիվանդ տեսք ունեն և ունենում են վերը նշված 3 նշաններից առնվազն մեկը: Տենդի այս դրվագները կրկնվում են 3-6 շաբաթը մեկ անգամ, երբեմն կանոնավոր միջակայքերով: Դրվագների միջև, երեխաները իրենց լավ են զգում և ունեն նորմալ ակտիվություն: Երեխայի զարգացման վրա ոչ մի ազդեցություն չի դիտվում: Գրոհների միջև երեխաները առողջ տեսք ունեն:

1.7 Հիվանդությունը նմա՞ն է բոլոր երեխաների մոտ:

Վերը նկարագրված հիմնական առանձնահատկությունները կարելի է գտնել PFAPA-ով հիվանդ բոլոր երեխաների մոտ: Ինչևէ, որոշ երեխաներ ունենում են հիվանդության թեթև նշաններ, մինչդեռ մյուսները կարող են ունենալ լրացուցիչ նշաններ, ինչպիսիք են ընդհանուր թուլությունը, հոդացավը, որովայնացավը, գլխացավը, փսխումները և լուծը: